տի անունները։ Իշկալա վտակը մօտ 15 կիլոմետր երկարութիւն ունի, Ճկարեստի լեռների բարձունքը կազմում է սրա եւ Խոփայ վտակի ջրբաժան գիծը, որի երկարութիւնը հազիւ թէ տասը կիլոմետր լինի, իսկ ծովից հեռաւորութիւնը ընդ ամէնը 7—8 կիլոմետր է։

Իշկալա վտակից 12 կիլոմետր ցած Ճորոխն են թափւում Զալօնա եւ Բեհլեվան լեռներից իջած Բեհլեվան վտակի ջրերը, որոնք բղխում են Կվախերխի լ-ից Սեւ Ծովի ափերից 6—7 կիլոմետր հեռաւորութեամբ, Մակրիալ վտակի բարձունքից։ Բեհլեվան գեղը, լեռը, վտակը, անցքը 1872ի քարտէզի վրայ Պահլաւան է տպագրուած. իսկ ժողովուրդը կանչում է Փէհլէվան։ Տարակոյս չկայ, որ հիւանդոտ ուղեղները փոփոխում են այս անունները քաղաքական ինչ-ինչ նկատումներով։ Իսկ գիտութիւնը մինչեւ օրս պեղումներ չէ՛ կատարել, որ վերջ տայ ճշմարտութեան առաջ ամէն տեսակ կեղծիքներ երեւալուն։ Փէհլէվան վտակի նախնական բաղուկը իջնում է Եանղունլի (հրդեհուած — գուցէ հրաբղխային) լեռներից, որն այս օր Զէրիա անունն է կրում եւ սրանից աւելի ցած 2 կիլոմետր հեռաւորութեամբ գտնւում է Գիդրեվետ գեղը իր բազմաթիւ աւերակներով։ Փէհլէվան վտակի, Փէհլէվան առուակի վրայ, Փէհլէվան լեռան ստորոտում գտնւում են Փէհլէվան